606

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Ժ. — ՇՐՋԱՆ Է. **1874** ՏԱՐԻ Է. — ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)

Ինչպէս Ամսագրոյս անցեալ Թ.-րդ Թըւոյ մէջ շարունակեալ յօդուածոյս ի վերջ ակնարկեցի, զի Հայկական դրականութեան պայծառ զարգացման և եկեղեցական բարեկարգութեանց յարատևելով՝ արտադրեալ արդիւնքներն կապացուցանեն Հայոց Եկեղեցւոյ և Ազգի համար յաւէտ կարևոր և անհրաժեշտ եղած միջոցները, որք միշտ Եկեղեցական Նուիրապետութեան և պաշտօնէից ձեռամբք կարգաւորուէին և կպաշտուէին:

Թէ արդարև այսպիսի միջոցները դործադրող և արգասաւորող Եկեղեցական Նուիրապետութեան և պաշտօնէից դերքն ևս որքան վսեմ և ակնածելի եղած է՝ նոյն իսկ օտարաց անգամ երկիւղ ներգործելով և նոցա ջանքերը ջլատելով, սոցա ապացոյցները քանիցս յիշեցինք, բայց պէտք է երեքկնեմք Մետասաներորդ դարու մէջ պատահածներէն ևս մի կարևոր ինչ յիշել յաւելլով:

Անցեալ Թուոյ մէջ Պետրոս Գետադարձ Կաթուղիկոսի վերայ ուղղուած հակիրճ ակնարկէն իմացուեցան Յունաց ջանքերն և նպատակներն, որք ոչինչ առիթ ի զուր փախցնել չէին թողուր, և եթէ պատահէր արգել ինչ՝ առ ժամս կլուէին, բայց ի ժամանակին դարձեալ կաշխատէին, և անխոնջ ջանքով կըհետևէին արդիւնաւորել ինչ որ նպատակ կալած էին: Ապաքէն Պետրոս Գետադարձի օրով ևս յոյնք փորձուած պիտի լինէին՝ զի իւրեանց բուն և ազգակուլ նպատակները արդիւնաւորել անկարելի էր, սակայն նորա առ Աստուած վերափոխուելէն զկնի՝ յաջորդ Խաչատուր Բ. Կաթուղիկոսի օրով կատարուած նորօրինակ հարստահարութիւնք և բռնութիւնք՝ գոգցես նոցա (Յունաց) յուսահատ և օրհասական մի ճիգը ևս կապացուցանեն:

Ի հնուց հետէ Յոյնք շատ փորձեր կըշռեցին, և ձեռնունայն ընկճուեցան. իսկ երբ Խաչատուր Կաթուղիկոսի օրով մե-

քենայած նոր հնարից և ապարդիւն ելնելը նկատեցին, իւրեանց Կոստանդին Տուկիծ կայսրը թելադրեցին, որ և սկսաւ իւր իշխանութեան մէջ գտնուած Հայաստանի բաժնին Հայերը չարաչար տագնապեցնել և նեղել անհնարին տառապանօք, այնպէս որ լաւ էր միանգամ մեռանէին քան թէ նոյնպիսի դառն կենօք ապրէին։ Ընդ Յունական իշխանութենէն գրաւեալ լինելով և Հայրապետութեան Աթոռն տակաւին անդ գտանուելով՝ Խաչատուր Կաթուղիկոս և անդ կենար. ուստի Կոստանդին Տուկիծ կը յաջողի զԽաչատուր Կաթուղիկոս ի Պոլիս բերել տալոյ, և ի նմանէ մեծ գանձ *) կպահանջէ և կստիպէ հատուցանել։ Իսկ երբ կտեսնէ՝ որ չէ կարող մի բան կրկին խլել, կբռնադատէ զԿաթուղիկոս՝ զի իւրաքանչիւր տարի հարկ տայ և կսպառնայ ի Պոլիս արգելուլ՝ մինչև որ պահանջուածը վճարէ։ Մի անգամայն կխորհուրդ՝ զի իւր իշխաններէն երկուսը ի Հայաստան կրկարկէ՝ որ մինն կաթուղիկոսական իշխանութիւնը վարէ, և միւսն կիւրապաղատութեան, և նոցա միջոցով իւր կամքերը կարդասաւորէ. սակայն Կաթուղիկոսն անվեհերութեամբ կարհամարհէ և առ ոչինչ կդրէ նորա սպառնալիքը և խրոխտալը և կմերժէ բարբարոսական պահանջները, որպիսիքը քրիստոնեայ չեղող իշխանութիւն և ազգերէն անդամ պահանջուած չէին, թող որ քրիստոնեայ եղող մի իշխանութեան և ազգի կվայելէր պահանջել *)։

(*) Զնայելով որ՝ Տուկիծն արդէն Գետադարձին թողած հարստութիւնը՝ ինչպէս նաև զիւղական կալուածները և ագարակները յափշտակած գրաւած էր, և կարծելով որ ուրիշ գանձ ևս ունի և այն կգտնուի Խաչիկ կամ Խաչատուր Կաթուղիկոսի մօտ՝ կպահանջէ զայն, որում՝ կակնարկեմ և ևս։

(*) Այս առթիւ Հ. Մելքիսէդեկ Զամչեան պատմագիրն հետևեալ գեղեցիկ դիտողութիւնը գրած է,

«Այլ ասա զարմանալ արժան է ընդ գործս սոցա. զի զմեծամեծ և զլիագանձ աշխարհս՝ զորս յափշտակեցին ի Հայոց, թողեալ էին յաւարառութիւն թշնամեաց, և ինքեանք զհետ լինէին ընչին իրաց։ Պարսիկք և Սկիւթացիք անդադար յարձակեալ ի սահմանս իշխանութեան նոցա՝ զգանձս քաղաքացն կողոպտեալ տանէին. և սոքա ի Հայոց խերևէշս և լումայս խնդրէին, և ամենևին փոյթ ինչ ոչ տանէին՝ գոնէ զմարդիկ փոխանակ ընիոնիցն փրկել. այլ՝ իսպառ ետուն կոխան աւարառուաց զպատուական աշխարհ մեր, իսկ ինքեանք զազգն զլեռվին. և ի վերայ այսր ամենայնի կեղէին զոգիս նոցա, և դադար բնաւ չտային։ Զայսմանէ վկայեն իւիք և նոքին իսկ պատմիչք Յունաց, և մանաւանդ Սկիղեցէս կիւրապաղատ, յերէս 814 և՝ 634, և Զոնարաս, էջէ ԺԸ ի հատոր 8. որ և բազմաք մեղադրեն զՅոյնս և զկայսրն Տուկիծ. զի ասեն, անհոգութեամբ իւրեանց սանակոխ թշնամեաց արարին զՄեծն Հայաստան և մանաւանդ զաշխարհն Վասպուրական. և նուաղեցուցին զազգն իսպառ։» (Զամչեան Եռահատոր Պատմ. Հայոց, Բ. 969)։

Մանաւորելով իմ դիտողութիւնը ևս, յայտնի բան է, զի Կոստ. Տուկիծ Գետադարձի և Խաչատուր Կաթուղիկոսի և այլոց գանձուն կամ զրամից կարօտ չէր, եւ ո՛չ այն աստիճանին հասած էր՝ որ նա իւր պէտքը լրացնելոյ համար՝ անխտիր ամենանձէ բռնութեամբ զրամ պահանջելոյ և յափշտակելոյ պարտաւորուէր։ Թէ Կոստանդնի և թէ Նոյնպիսեաց նպատակն էր և է իւրեանց անձնական կամ մտադրեալ կամք և կիրքերը յագեցնել չկարողանալով՝ ի փոխարէնն կարելի եղած վը-

Դամանակի յարմարութիւնն և Հայոց տաղնապալից նեղ վիճակը բարեպատեհ առիթ համարուեցաւ Յունաց և Կոստանդնին, ուստի զԿաթուղիկոս ի Պոլիս արգելլով՝ Կոստանդինն դարձաւ մի նոր Յաղկերտ, և նոր հնարներ մտածելով՝ դարձեալ ամբողջ Հայոց Ազգը յունացնելոյ երևակայութեամբ մոլեալ՝ մտածեց մի առ մի Հայոց իշխանքը ի Պոլիս հրաւիրել, և առանց Կաթուղիկոսի գործակցութեան՝ նոցա ձեռամբք իւր կամքը կատարել տալ։ Բայց այս հնարս ևս անյաջող կմնայ, և այս բանիս համար ևս յիշատակաց արժանի է գահակալ Գագիկն՝ որ մեծ դեր կատարեց և արդիւնաւորեց։

Թէ ի՞նչ էր խնդիրն, ասատանօր Մատթէոս Ուռհայեցի Պատմագիրն թող խօսի։

«Յայսմ ամի (1060 թ. Փրկչական) Տուկիծ թագաւորն Հոռոմոց և Պատրիարքն և ամենայն կղերիկոսքն, և ամենայն դասք ներքինեացն լծակիցք լեալ կամէին չարաշունչ և պիղծ խորհրդոյ ա-նօրէն թագաւորին, և ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց (Յունաց) ձեռն առեալ խաւարային խորհրդոցն։ Ապան զի կամէր թագաւորն չար միաբանելոք իւրովք՝ բառնալ զՀայոց հաւատոյ դաւանութիւնն, և խորհէին եղծանել զհաւատս Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և կամեցաւ զիւր դիւաբուն և զխառնափընդոր և զթերակատար զհաւատն կատարել ի Հայք, և զհաւատն՝ զոր ի վաղ ժամանակաց հետէ ամրացեալ էր ի Հայաստան աշխարհս՝ (ջնջել)։ Ապան զի հիմնարկեալ էր (հաւատն մեր) անդամանդ վիմաք՝ աշխատանօք և մահուամբ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և բազմադիմի և ազգի ազգի չարչարանօք Լուսաւորչին սրբոյն Գրիգորի, որ կայ և մնայ անսասանելի մինչև յաւիտեան։ . . . . Եւ արդ ահա առաքեաց թագաւորն Տուկիծ ի Սեբաստիա քաղաք և կոչեաց զորդիսն թագաւորացն Հայոց զԱտոմ և զԱպուսահլ՝ գալ ի Կոստանդնուպոլիս։ Եւ նոքա ծանեան առ սակաւ մի զչար խորհուրդն, և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս Վարդապետն՝ ըստ աւելի անուանն Բարափնեցի՝ այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդնուպոլիս. և թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիք թագաւորացն Հայոց։ Եւ զկնի սակաւ աւուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մտաց իւրոց, և ասէր թէ՝ հրամանք է թագաւորութեանս մերում, զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին՝ առնուք յանձինս ձեր զկնունք հաւատոյ

ըէժենդրութիւն և կսկիծ հատուցանելոյ՝ հետ՝ նաև զԿաթուղիկոս միանգամայն զԵկեղեցին աղքատացնել ըստ զրամականին և նեղի լծել։ Սակայն եթէ նիւթականը խլուի, բարոյականը և կրօնականը ինչ կլինի և կարելի է անել՝ քանի՞ որ Հայաստանեայց Եկեղեցի և Ազգ կայ, և նոցա կրօնական և ազգային գիտութիւնք և ուսմունքներն կաւանդուին և ամեն Հայ կսիրէ։ Քաղաքականի՞ կնմանի՝ որ նորա ուժը շատ անգամ՝ միայն և դիդայ դրամ ՀԷրայ կիայանայ, որպէս զի նոքաւ կարողանայ զոքք պահել, պատերազմական պատրաստութիւնք ունենալ, և իւր գոյութիւնը պահպանել։ Սակայն ինչ որ կրօնականն և բարոյականն կզործէ, տակաւին սակաւք կհասկանան, և նոցա գերազանց արգասիքներն հրաշքներ կարտադրեն։

ազգիս Հոռոմոց։ Եւ յայնժամ նոքա ի մէջ Հոռոմոց անկան ի մեծ տարակուսանս, և տեսեալ զԹագաւորն՝ Արտոմն և Արշաւաշն. մեք առանց Գագկայ Աշոտոյ որդւոյն ոչինչ կարեմք առնել. զի նա այր քաջ է և Թագաւոր և մեր փեսայ, առաքեա և կոչեա զնա այսր. զի եթէ մեք առանց նորա իրք առնեմք՝ հրով այրէ զմեզ ի գաւառն մեր։ Եւ լուեալ Թագաւորն ոչ կամեցաւ զգալն Գագկայ։ Վասն զի այր հզօր էր յիմաստասիրական ջոկսն և անյաղթ ի պատասխանիսն. զի նա ի սուրբն Սոֆի*) նստէր ի յամբիոնն ընդ ամենայն վարդապետսն Հոռոմոց։ Եւ յայնժամ Արտոմ և Արշաւաշն գաղտ խնդիր հանին Գագկայ։ . . . . ։ Եւ ի նոյն ժամայն իբրև զարծիւ Թռուցեալ հասանէր Գագիկ ի Կոստանդնուպօլիս. և լուեալ Թագաւորն՝ ուրախ եղև յոյժ. և իբրև մտաւ առ Թագաւորն՝ հրամայեաց բերել զգիր**) միաբանութեանն. և առեալ ընթերցաւ Գագիկ. և իբրև ծանեաւ զգրեալն Յակոբոսի՝ պատառեաց զնա՝ առաջի Թագաւորին՝ յերկուս ծուէնս, և ընկեց զնա յերկիր. և Թագաւորն սաստեալ ամաչեաց յոյժ. և ասէր Գագիկ ցԹագաւորն վասն վարդապետին, եթէ ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բազումք կան յաշխարհն Հայոց՝ որք ոչ ընդունին, և ոչ ոք հնազանդի գրոց սորա։ Եւ մեք ընդ կատարեալ վարդապետսն Հայոց ոչ ունիմք զսա։ Եւ յայնժամ առաջի Թագաւորին յանդիմանեաց ըզՅակոբոս . . . ։ Եւ գրեաց Գագիկ գիր հաւատոյ ձեռամբ իւրով . . . ։„

Այսպէս ուրեմն Եկեղեցւոյ և Հայրապետութեան սէրն սիրով ընդ միմեանս անբաժանելի կերպով միաւորուելն կըյաջողի Յունաց այս անգամուայ վերջին փորձը ապարդիւն հանելոյ, և սորա համար էր՝ որ Խաչիկ Կաթուղիկոսի վախճանէն զկնի՝ Յոյնք կաշխատէին որ նոր Կաթուղիկոս չընտրուի և չդրուի, որպէս զի Կաթուղիկոսական Աթոռն պարապ մնալով Հայք Հայրապետութեան հետ կապեալ սէրն միութենէն քակուին և սառնանան, ևս ի Հոռոմութիւն դիմեն՝ ինչպէս որ Ներսէս Շնորհալի ևս իւր աշխատասիրած ոտանաւոր պատմական վիպասանութեան մէջ պարզապէս կյիշէ. սակայն Թշուառքն չէին յիշեր կամ այնքան բթամիտ էին՝ զի Հայրապետական պաշտօնը վարելոյ համար զոմն ընտրել չթողլով անշուշտ կկարծէին և կերևակայէին ջնջել զՀայրապետութիւն Հայոց, մինչդեռ առանց ջնջելոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ գոյութիւնը՝ անհնար է զՀայրապետութիւն և զԵկեղեցական Նուիրապետութիւն ջնջել՝ որք ի միմեանց անբաժանելի են. և եթէ այս ինչ քաղաքի մէջ բռնադատութեանց և հարստահարութեանց ենթարկուելն, այն ինչ քաղաքի մէջ տեղափոխուելով և ազատութիւն գտանելով՝ կարող են միև նոյնը շարունակել՝ ինչպէս որ բազմիցս եղած է, և այս անգամ ևս եղաւ ի Ծամնդաւ ի Կաթուղիկոսութիւն ընտրելով Վահրամ—Գրիգոր վկայասէրը. որով դիւրին է իմանալ՝ զի ոչ տեղն և ոչ անձն է պաշտպանեալն, այլ Հայրապե-

(*) Կ. Պօլսոյ Ս. Սոֆիոյ Եկեղեցւոյն համար է։

(**) Քաղաքինեցի կամ Սանահնեցի Յակոբ Վարդապետին գրածն է՝ զոր Տուկին հրամայած էր։

տութիւնն համդերձ իշխանութեամբ եւ իրաւասութեամբքն ի պէտս Ազգի՝ եւ Եկեղեցւոյ եւ նոցա գոյութիւնքը ապահովելոյ համար։

Ինչ եւ իցէ։ Յունական բազմադարեայ տեւողութեան արգասիքներն եւ պատճառներն այնքան շատ են՝ որ գրելով եւ պատմելով մեծ հատորներ կկազմուին, եւ տակաւին ինչ ինչ դաւաճանութիւնքը եւ նենգամիտ ջանքերը հետզհետէ պիտի տեսնուին այս հակիրճ յօդուածոյս մէջ*)։

Գրիգոր Վկայասէր Կաթողիկոս — թէպէտ ազատ մնաց Գետադարձի եւ Խաչիկ Բ. Կաթողիկոսի ի Յունաց կրած չարաչար տառապանքներէն, մանաւանդ նորա օրով Յոյնք սկսած էին առ մեզ հասուցած վտանգներէն թուլանալոյ՝ որում ուրիշ պատճառներ եւս ունէին, եւ չնայելով որ Յունական եւ Պարսկական իշխանութեանց ըստ քաղաքականին գործած աշխարհակործան աւերմունքներն եւս կը շարունակուէին, — մի քանի եկեղեցական բարեկարգութիւններ անելէ զկնի՝ միշտ գրաւոր թարգմանութեանց պարապել սիրելով եւ կամենալով, նա եւ չկարողանալով Ազգի տառապանաց դարման տանել եւ կամ ժուժել, կխորհի ի Կաթողիկոսութենէ հրաժարելոյ, եւ կյաջողի ի տեղի իւր Կաթողիկոս զԳէորգ Լոռեցին օծելոյ, եւ երբեմն այլոց եւս Կաթողիկոսութիւն տալով՝ Վկայասէրն մի չար սկզբունք եւ օրինակ կընծայէ ապագային, եւ գրեա թէ այն ժամանակէն սկսեալ եւ իբրեւ օրինաւորապէս կյառաջանայ այն չարիքը՝ որ փոխանակ միոյ Կաթողիկոսի՝ հետզհետէ մի քանի Կաթողիկոսներ կլինին, եւ Եկեղեցւոյ Նուիրապետական մեծ եւ վսեմ կարգի մէջ մի մեծ զեղծմունք եւ խանգարմունք կմտնէ եւ կշարունակուի ի վնաս Եկեղեցւոյ, որոյ չարիքները ցայսօր կտեսնուին եւ պիտի տեսնուին Ազգի մէջ՝ մինչեւ որ իսպառ նոյնպիսիքն բարձուին եւ ջնջուին։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

(*) Յոյնք աւելի ատելի եղած էին Հայոց՝ վասն զի նոքա իբրեւ Քրիստոնեայ եւ Եկեղեցւոյ կամ կրօնական սէր եւ միութիւն քարոզելով, եւ պատրուակելով իւրեանց ներքին նպատակ եւ ձըգտումները, քաղաքական իշխանութիւնն մի կողմէն, եւ կրօնականն միւս կողմէն մեծ վտանգներ բերին եւ բազում չարիք հասուցին Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի վերայ։ Եւ երկար ժամանակներ նա եւ ուսումն եւ գիտութիւնք նոցա մէջ ծաղկեալ գոլով՝ ոմանք ի մէնջ կերթային ի Յունաստան աւելի գիտութիւններ ուսանելոյ համար, եւ երբեմն խըմորուած կգային եւ փոխանակ օգտակար անդամ լինելոյ՝ աւելի վնասատու կկանգնէին, եւ միամտութեամբ չափազանց համակրութիւն առ Յոյնս կցուցանէին՝ ի նոյն գնդին եւս յորդորել ջանալով։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ

Ա. — ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ.

Կաթողիկէ Եկեղեցի կոչեցաւ առաջին Եկեղեցին Վաղարշապատայ՝ ի հըրեշտակէն սրբոյն Գրիգորի տեսիլը բացարելու ժամանակին, «Ասկի խարիսխն վէմ հաստատութեան անշարժութիւնն